

## \* Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ք \*

Ելեկտրական լուսաւորութեան օգուտներմ . — Ելեկտրական լուսաւորութեան օգտակարութիւնքն թէ և անհուն են, բաղդատութեամբ այժմեան որ և է լուսաւորութեան դրութեանց հետ, սակայն զնենք մենք հոս առանձինն յառողջաբանական մասին ունեցած կարևորութիւնքն :

Բուէ, անգղիացին կը հաստատէ թէ մարդկանց կեանքը պիտի սկսի երկարիլ, երբ բոլոր աշխարհք ելեկտրական լուսաւորութիւնն ընդունելու ըլլայ, վասն զի մեր ներշնչած օդը խառնուրդ մ'է երկու կազերու, թթուածնի և բորակածնի. գրեթէ 80 առ 100 բորակածին և 20 առ 100 թթուածին. Բաց ասոնց՝ կը բովանդակէ իւր մէջ ամենափոքր քանակաւ՝ ջրեղէն գոլորշիք և ածխածնաւկան թթուուա -acide carbonique- (3-6 հազարամասն ջրեղէն գոլորշիք, և 3-10 տասնհազարամասն ածխածնաւկան թթուուա). և երբ հազարամասն մի ածխածնաւկան թթուուա գտնուի օդոյ մէջ, դա անյարմար է շընչառութեան և վնասակար :

Հասունացեալ մարդ մը 24 ժամուան մէջ, միջին հաշուով, 10 մետր խորանարդ օդ կը չնչէ, որ և կը կըսէ 13 հազարագրամ. անոր համար կարենոր է որ օդոյ մէջ անմաքրութիւնք չտնուին, որպէս զի թրերն ալ չյոդնին, շտկարանայ թթուածնի քանակն՝ որ կիզման համար կարենոր է գործարանաց մէջ, և հետևաբար մարդուս առողջութեան վիճակը յանկարծական չայլայիլ. Արդ, լուսաւորութեան կազմ վասած միջոց, իւր շրջակայ օդոյն թթուուածնէն կը բառնայ մի մասն: Արդէն իսկ ամէն մարդու ևս ծանօթ է որ քանի ուր ժամանց նելէ վերջը թատերաց օդն, օրինակ իմն, բոլորովին վնասակար է շնչառութեան. վասն զի կազի բոց մը՝ ժամուան մէջ 420 լիտր կիզանելին նիւթ կը սպառէ, և իւր կիզման ծառայած թթուածնի քանակն չորս միջահասակ մարդկանց շնչառութեան կը հաւասարի. և որովհետեւ աղէկ լուսաւորեալ դահլիճներու մէջ կազի լոյսերն բաղմաթիւ են, ասկից կը հետեւի թէ շնչառութեան ծառայող օդոյն

թթուածինն ևս շուտով կ'անպիտանանայ: Այնպիսի տեղեաց մէջ օդոյ ապականութիւնն սոսկ թթուածնի պակասութենէն չէ, այլ նաև կազին մէջ գտնուող երկրորդական արդինքներէն, և ածխոյ փոշիէն՝ որ անկատար կիզման պատճառաւ կը ցրուի յօդու:

Զէթով, քարիւղով վառող կանթեղքն և ճրագներն, շատ աւելի թթուածին կը սպառեն քան լրաւորութեան կաղը, երբ ուղենք կազին լուսոյն սաստկութեան հաւասար լոյս ունենալ. և ուր որ կը վառին այս նիւթերս, նոյն տեղեաց օդը շատ աւելի երագ կը խանգարի և կ'ապականի:

Ելեկտրական լապտեր մը 12 ճրագօք՝ թթուածին չի սպառեր, բնոծիսական թթուուտ - acide carbonique - չի ար, օդը չապականեր և ժամուան մի մէջ 34 ջերմացուցակ - calorie - կ'արձակէ.

Կողի լոյս մը, մի և նոյն սաստկութեամբ լրւոյ, 95 լիտր թթուածին կը սպառէ, 56 լիտր բնածիսական թթուուտ կու տայ, 450 լիտր օդ կ'ապականէ, և ժամուան մի մէջ 550 ջերմացուցակ կ'արձակէ:

Զէթով լամբար մը, միշտ հաւասար սաստկութեամբ լրւոյ, 130 լիտր թթուածին կը սպառէ, 94 լիտր բնածիսական թթուուտ կու տայ, 675 լիտր օդ կ'ապականէ, արձըկելով ժամուան մի մէջ 822 ջերմացուցակ:

Քարիւղէ լամբար մը 170 լիտր թթուածին կը սպառէ, 121 լիտր ածխածնական թթուուտ կու տայ, 934 լիտր օդ կ'ապականէ, և ժամուան մի մէջ 822 ջերմացուցակ կ'արձակէ:

Հուսկ ապա, բնածարպական 12 աղնիւ ճրագներ, 240 լիտր թթուածին կը սպառեն, 175 լիտր բնածիսական թթուուտ կու տան, 1240 լիտր օդ կ'ապականեն, և ժամուան մէջ 940 ջերմացուցակ կ'արձըկեն:

Ուրեմն, կրնանք կրկնել Համճնթի խօսքը այն անձանց, որը խնայողութեան համար չեն ուզեր ելեկտրական լոյս գործածել, թէ ո՞ր մայրը կը համարձակի արդեօք տալ իւր որդւոյն կերակուր մի զոր գիտէ թէ վնասակար է առողջութեան, պատճառելով միջոցին խնայողական ըլլալը և ծախուց նուազութիւնը»:

Կատաղորեկան դէմ նոր դեղ մը. — Պօքէ բժիշկն: որ միանգամայն ուսուցիչ է ֆլավէնպուրկի համալսարանին, կ'աւետէ մեղ թէ զօրաւոր գեղ մի հնարեր է այս զարհուրելի հիւանդութեան դէմ: Այսինքն, խանուրդ մի քլորեալ (chloré), ժահնեալ (bromé) ջրոյ, ծծմբական թթուուտի (acide sulfurique), վերամագնանատ կալցոյ (permanganate de potassium) և հեկալիպտոսի (Eucalyptus) իւղըն: Պէտք է լրւանալ նախ կրկին և կրկին կենդանուոյն խածուածքէն պատճառած վերը, ապա թանալով բամբակը սոյն վերոյիշեալ հեղանիթոյն մէջ դնել վիրաց վրայ և պատել: կը հաստատէ հոնգարացի բժիշկն, թէ

այս գեղովս կը ջնջուին գործարանաց միջէն կատաղութեան աղիտա-  
լի արդիւնքներն :

Նոյն բժիշկն կը ջանայ արդ գտնել այնպիսի գեղեր , որը կարենան  
ներբուստ օգուտ մընել այս աղիտալի հիւանդութեանս :

Նոր դրուրեամբ հացադործուրիւն . — Եատ կը խօսուի հացա-  
դործութեան նոր դրութեան մը վրայօք , որոյ սկզբնաւորութիւնը թէ  
և քանի մի տարիներէ 'ի վեր է , սակայն 'ի գործնականի գեռ նոր ըն-  
դունելութիւն գտաւ :

Այս դրութիւնս ամենապարզ է . ափիւրը առանց զանգելու կը խառ-  
նեն ջրոյ հետ , լուծելով առաջուց յետնոյս մէջ գարեջրոյ խմոր և  
այս ինչ քանակութեամբ քաղցրանիւթ - glucose - , խառնուրդը լմբն-  
նալէ վերջը , նոյն զանգուածէն հացեր կը ջնեն , որը կը սկսին փութով  
բարձրանալ ուռիլ և կ'ըլլան քաղցրահամ և թեթի : Ներկայ ջրու-  
թեանս մէջ քաղցրանիւթը միանալով գարեջրոյ խմորին հետ՝ յառաջ  
կը բերէ բնածխական թթուուտ - acide carbonique - , որ և կ'ըլլայ  
խմոր զանգուածոյն : Ասով ալիւրին օսան - amido - չի սպառիր ,  
հացին քանակը չի նուազիր . կ'ունենանք զգալի խնայողութիւն ժա-  
մանակի և աշխատութեան . առջի զրութենէն աւելի առատ հաց ,  
որ աւելի ևս մնուցիչ է և ընտիր , և կ'ազատինք միանգամայն զան-  
գելու նեղացուցիչ աշխատութենէն :

Երագ հեռագրուրեան նոր դրուրիւն . — Ոօժէր հնարեց նոր կազ-  
մած մի երագ հեռագրութեան , որոյ յատկարար կատարելութիւնն  
է իւր մեծ արագութիւնը , այսինքն , վայրկենի մը մէջ 2500 պտոյտ  
ընել և գրեթէ 500 բառ փոխանցել . ունի հիանալի գրութիւն մը՝  
համաժամանակ - synchronisme - շարժմունքներ կատարելու . նշանա-  
գրաց յօրինուած մը , որ մի քանի ուղղագծերով կամ կորագծերով  
ընկալուչ թղթոյն վրայ գրեթը կը կազմէ :

Համաժամանակ շարժմունքներն կայծէ մի կը ծնանին , որ տեսա-  
նելի է երագաշարժ և գրօշակաւոր անուի մը շրթա՞ց վրայ . միւս  
կայարանին մէջ ևս կը գտնուի ասոր նման գրօշակաւոր անու մը .  
առաջնոյն մէջ հոսանքը անցնելով ընդունիչէն . relais - , կ'ընդհատէ  
մակածութեան կարմառի - bobine d'induction - մը առաջին շրջապա-  
տը - circuit - , յառաջ բերելով երկրորդին մէջ կայծ մը : Երբ երկու  
անիւներն ևս համաժամանակ շարժին կայծը անշարժ կ'երևի . իսկ  
եթէ ընդհատի համաժամանակութիւնն և կամ երագէ , կայծն ալ  
կ'ընդհատի կամ կը յառաջէ . կը կանոնաւորեն երագութիւնը ասնձի  
մը միջոցով :

Ընդունիչ թուղթն գրաւոր մեքենայիւ մի կը ծակծկի , և առ միւս  
կայարան ուղղուած հեռագիրն սովորական գրեթրով ընթեանլի կ'ըլլայ :

ի վօշինկթըն և 'ի նիւ Եօրք փորձուեցաւ այս գրութիւնս և յաջող ելք ունեցաւ:

Թանձր ճուիս արձրկող վառօդ .— Գտան անծուխ վառօդ , և կ'աւետեն արդ թէ յԱւտրալիա դտեր են դարձեալ առաջնոյն հակառակ թանձրածուխ վառօդ մը , որ վառելով 10 վայրկեան՝ անհնարկ լինի այլ ևս շարունակել պատերազմը : Կը կարծուի թէ այսպիսի վառօդ մի հնարենուն նպատակն է , պատերազմական դաշտին վրայ ժածուկ 'ի թշնամեաց բանակները տեղափոխել:

Ռիտար (Ritari) երաժիշտ բոչուն .— Լսուած չէ ռիտար անունն , և սակայն աշխարհիս հրաշալեաց մին է : Ամերիկեան թուշուն մ'է , որ անդրածովիքան աշխարհաց մէջ քիչ կը գտնուի . չոնի շողշողուն գոյներ , փետուրքն գորշագոյն են , բայց իւր յարգը ձայնին և երգին մէջն է . կարծես թէ կոկորդին մէջ երկվեցեակ մի երաժշտական գործիքներ պահած է : Զկայ բնաւ ինչ մի այնքան որորուն և ներգաշնակ , բազմազան , կատակերգակ և անսովոր , ինչպէս այն ձայնը որ եռանդուն և ցնծալից արձագանգ մի կ'ըլլայ ամէն ձայներու , ամենայն երգոց , ամենայն շառաչից : Ռիտարը կը մայէ . կը խինջայ , կը կարկաչէ , կը մաւէ , կը բզզէ . կը հառաչէ : կարծես աշխարհիս տեսակ տեսակ կինդանեաց զանազան ձայները կլեր է , և բարելոնի աշտարակն կոռոդին մէջ կը կրէ :

Սընկոց կիրառորիշնն միջաւները չնշելոց հաւաք .— Բազում բնապատումք երկար տաենէ 'ի վեր կը հաստատէին թէ փաստակար միջատները չնշելու միակ միջոց մ'է ցանել այնպիսի սընկեր , որոց վրայ մակարոյժ -parassite-, ապրին վերոյիշեալ միջատքն : Այս սկզբունքը ուրիշի ժամանակներում մէջ սկառ գործադրուիլ : Պաօնեար հաստաեց թէ 'ի մասնաւորի Ապականիչ -Eutomostore- կոչուած դատուն վերաբերող մանրադիատական սունկերն են , որոց վրայ դիւրազոյն կերպով կ'ընթանան վնասակար միջատքն և կը սպաննուին : Այս տեսակ ալնկոց սերմը գրեթէ ոչինչ ծախքով կ'ունենանք , և ցանած տեղերնիս կը բուսնի ամենայն դիւրութեամբ : Ի Ռուսաստան կը գտնուի արդ փոքրիկ տեղի մը 'ի մշակութիւն այս միջատասպան դաղտուսեռ -cryptogame - բուսոց : Գործածութիւնն յաջողած է լիս . վին չնշելով վերոյիշեալ պատենաթեւ -coleoptere - միջատքն ճակնդեք զաց արտերէն , ուր մ.ծամեծ վնասներ միշտ անպակաս կը լինէին :